

- Պարոն Նախարար, սեպտեմբերի 28-ից, երբ կառավարությանը ներկայացրիք 2010թ. բյուջեն, վերջինին բազմաթիվ «բնութագրումներ» տվեցին՝ պահպանողականից մինչև ոչ իրատեսական: Ի՞նչ անվանում կտայիք Դուք՝ Ձեր դեկավարած Նախարարության մշակած բյուջեին:

- Հաջորդ տարվա բյուջեն, իմ գնահատմամբ, կայունացման բյուջե է: Կայունացման փուլ մենք արդեն մտանք օգոստոս ամսից, մինչև տարեվերջ այդ միտումն ամրապնդվեց: Արդեն 2010 թվականին կայունացումից մենք կվերադառնանք տնտեսական աճի փուլ: Իհարկե՝ ոչ այն տեմպերով, ինչ նախկինում, բայց հունվարից կունենանք տնտեսական աճի ցուցանիշներ:

- Լուրջ ներարկումներից հետո խոսվում էր, որ արդեն չորրորդ եռամսյակում տնտեսության մեջ

լուրջ փոփոխություններ կզգացվեն: Բայց սեպտեմբերի եւ հոկտեմբերի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ դեռևս զգալի անկում ենք արձանագրում:

- Այդ անկումը սովորական սեզոնային անկում էր, որը յուրաքանչյուր տարի արձանագրվում է: Բնականաբար՝ տնտեսության համար ամենաակտիվը ամռան ամիսներն են, եւ դեպի ձմեռ անկում է նկատվում՝ պայմանավորված թե՛ գյուղատնտեսության, թե՛ շինարարության ոլորտում ակտիվության նվազմամբ: Ամռանը նույնիսկ աճ ենք արձանագրել տնտեսության մեջ: Բայց մենք այն ժամանակ էլ ասացինք, որ այդ աճը պայմանավորված է սեզոնայնությամբ: Այնպես որ՝ երկու ամսվա համեմատությամբ աճ կամ ետընթաց գնահատելը ճիշտ չէ:

- Նկատի ունեի, որ մենք ավելի քան 1 մլրդ դոլլարի ներարկում

2010-ը կլինի կանխաճեւելի, հավասարակշռված

**Տիգրան
ԴԱՎԹՅԱՆ**

Հայաստանի
Հանրապետության
Ֆինանսների
նախարար



Չրուցում է
Աշոտ ԽԱԶՍՏՐՅԱՆԸ



ենք կատարել տնտեսության մեջ, եւ արդեն արդյունքներ պետք է լինեն:

- Աշխուժությունը արդեն նկատվեց օգոստոս ամսից սկսած, երբ անկման տեմպերը սկսեցին մեղմանալ:

- Բայց դա այդպես է, որովհետեւ համեմատությունը անցած տարվա նույն ամիսների հետ է, երբ տնտեսությունն արդեն սկսել էր անկում արձանագրել:

- Տարիների միջեւ համեմատությունը ամսվա կտրվածքով չեն անում, այլ տարեսկզբի, եռամսյակի, կիսամյակի եւ այլն: Անցած տարվա անկումը սկսվեց հոկտեմբերից, եւ համեմատության ժամանակահատվածը հունվար-հոկտեմբերն է: Սա ներառում է նաեւ մինչեւ օգոստոս ամիսը մեր ունեցած ցուցանիշները, երբ տնտեսությունն աճի բարձր տեմպեր ուներ: Այնպես որ՝ սեզոնայնության տարրը խաբուսիկ է եւ իրականության պատկերը չի արտացոլում, ուստի՝ ճիշտ համեմատականը տարվա սկզբից մինչեւ տվյալ ամիսը նախորդ տարվա նույն փուլի հետ համեմատելն է: Այդ առումով կայունացման, աշխուժացման դինամիկա նկատվում է: Օգոստոսից սկսած՝ ցուցանիշները սկսել են բարելավվել: Դա նշանակում է՝ տնտեսության վերականգնման առումով զարգացում կա: Բացի մակրոցուցանիշներից, վերջին ամիսներին վարկավորման ծավալներն են մեծացել: Դրանք հիմնականում այն ռեսուրսներն են, որոնք դրսից բերելով՝ հատկացվեցին բանկային համակարգին:

- Քանի որ խոսեցիք դրսից բերված միջոցների մասին, հիմա մեր կառավարությանը խիստ քննադատում են, թե հատկապես ռուսական վարկի, որ բերվել է բարձր տոկոսներով (LIBOR+3), մի մասը չի դրվել տնտեսության մեջ, մինչդեռ պետությունը արդեն դրա դիմաց տոկոսներ է մուծում:

- Չաշխատող որեւէ գումար չկա: 500 մլն դոլլարն ամբողջությամբ օգտագործվել է տարբեր

փուլերում, «սառած» որեւէ գումար չկա, որովհետեւ 185 մլրդ դրամ այդ ռեսուրսներից արդեն տեղաբաշխվել է 120 մլրդ դրամի չափով: Մնացած գումարից 25 մլրդ-ը կուղղվի աղետի գոտու շինարարությանը, իսկ այն գումարը, որի առումով որոշումներ ընդունված են, բայց տեղաբաշխված չէ, փոխանցել ենք ԿԲ-ում կայունացման ֆոնդի եւ դեպոզիտային հաշիվների վրա, այսինքն՝ մենք այնտեղ տոկոսներ ենք ստանում, հետեւապես՝ սառած գումար չկա: Թե՛ տեղաբաշխումները եւ թե՛ դեպոզիտում եղածները ավելի բարձր տոկոսներով են, քան մենք Ռուսաստանից ստացել ենք:

Ռուսաստանից ստացված գումարները բարձր են կոնցեսիոն վարկերի նկատմամբ, բայց ցածր են միջազգային շուկայում գոյություն ունեցողներից: Համաշխարհային շուկայում այդ տոկոսադրույքը LIBOR+ 7-8 է: Այնպես որ՝ այդ գումարի համար պայմանները փափուկ են եւ շատ ավելի շահեկան, քան համաշխարհային շուկայում շատ վարկեր:

- Մեկ տարվա ընթացքում գրեթե այնքան պարտք կուտակեցինք, որքան ունեինք մինչ այդ: Ինչպե՞ս եք տեսնում այդ պարտքի մարման, սպասարկման գործընթացը, մանավանդ որ՝ արդեն մեկ-երկու տարուց պարտքի սպասարկմանը լուրջ գումարներ պետք է հատկացվեն, իսկ տնտեսության աճի նախատեսվող տեմպերը համեստ են: Մյուս կողմից էլ միջազգային կառույցների նեկայացուցիչները այդ հարցի շուրջ վերջին շրջանում բավական զգուշավոր են՝ նշելով կոռուպցիայի ծավալների շեշտակի նվազման անհրաժեշտության, մրցակցային միջավայրի բարելավման, մենաշնորհների չեզոքացման մասին:

- Թվերը, ծավալն իրոք մեծացել է: Եվ դա բնական է, որովհետեւ 2009-ին աշխարհի բոլոր երկրներն էլ այդ ուղով ընթացան՝ վարելով ողջամիտ, այսպես կոչված՝ ընդլայնողական քաղաքականություն, իսկ

դա նշանակում է, որ երբ քիզները պասիվ դիրք է գրավում տնտեսության մեջ, պետությունը, տնտեսության մակարդակը պահպանելու նպատակով, իր հերթին ստանձնում է այդ դերակատարությունը: Եթե մենք դա չանեինք, կունենայինք շատ ավելի վատ վիճակ եւ որակապես վատ վիճակ: Արդյունքում՝ մենք ունենք մակրոտնտեսական կայունություն: Չնայած անցնող տարում տնտեսությունն անկում ապրեց, բայց որեւէ պահի մեր մակրոտնտեսական կայունությունը չխարխվեց, եւ ծավալների, ցուցանիշների նվազումը չբերեց երկրում մակրոտնտեսական անկայունության: Հիմա ավելի վստահ կարող ենք ասել, որ 2010 թվականին մակրոտնտեսական դաշտում որեւէ խնդիր չենք ունենա, եւ ամեն ինչ հավասարակշռված կլինի:

- Մեզ մոտ մակրոտնտեսական կայունություն էր, բանկեր չփլուզվեցին, մի բան, որ ասենք՝ մի շարք այդ թվում՝ արեւելաեվրոպական երկրներում տեղի ունեցավ, եւ այնքան էլ կայուն մակրոցուցանիշներ չկային: Բայց այսօր մեր տնտեսական անկումն ավելի խոր է, քան այդ նույն ԱՊՀ մյուս երկրներում:

- Ես չեի ասի, թե անկման տեմպերն ավելի ցածր են: Նույն կարգի են: Նաեւ նույն վիճակն է Բալթյան երկրներում, Արեւելյան Եվրոպայի մի քանի երկրում, որոնք մեզանից շատ ավելի հարուստ են, բայց այդ երկրներում առկա են անկման գրեթե նույն տեմպերը: Նավթ ու գազ ունեցող երկրների մասին, հասկանալի է, խոսել պետք չէ: Բայց վերոթվարկյալները մեզանից շատ ավելի հզոր տնտեսություններ ունեն: Այնտեղ անկման արդյունքում բավական լուրջ եւ անցանկալի հետեւանքներ արձանագրվեցին՝ բանկեր փլուզվեցին, աշխատավարձեր, թոշակներ կրճատվեցին: Այնտեղ իրոք ճգնաժամային իրավիճակ է, որ կյանքի վրա լուրջ ազդեցություն թողեց: Իսկ Հայաստանում թոշակները վճարվեցին, աշխատավարձերը՝ նույնպես, ուշացումներ չեղան:

- Բայց ընդունենք, որ մեզանում այդ ամենը հնարավոր եղավ ապահովել ընդամենը վերցրած մեծաքանակ վարկերի շնորհիվ:

- Դա կառավարության խնդիրն է: Կարելի է, որ բնակչությունը գրեթե չզգաց դրա ծանրությունը: Ավելին՝ այս պայմաններում մեր միջին աշխատավարձը 14%-ով աճել է, իսկ գնաճը 5-6% է: Ուսուցիչները ստացան մինչև ճգնաժամը բարձրացված աշխատավարձերը: Բյուջեն ընդհանուր առմամբ ապահովեց այն ծախսերի մակարդակը, որը պլանավորված էր տնտեսական 9.2% աճի պարագայում: Փաստորեն՝ 18% անկման պարագայում մենք կարողացանք ապահովել 9.2%-ի մակարդակ: Բանկային համակարգը կանգուն պահեցինք, աշխատավարձերն ապահովեցինք, բյուջեի վճարումները կատարեցինք: Ընդհանուր առմամբ՝ 2009թ. բյուջետային ծախսերը կլինեն մոտ 910 մլրդ դրամ: Պլանավորված էր 945 մլրդ, բայց ինչպես ամեն տարի, այս տարի էս խնայողություններ կունենանք: Մեծ հաշվով՝ այս տարվա բյուջեն ծախսային մասով ըստ էության կատարվեց, ինչը գուցե շատերի համար անսպասելի էր:

- Հիմա մասնագիտական շրջանակներում խոսում են, որ իրական ճգնաժամը Հայաստանում կզգան 2010-ին:

- Այդ նույն մասնագետները պնդում էին, որ այս տարի մեր տնտեսությունն ուղղակի կործանվելու է: Ինչ վերաբերում է եկող տարվան, նման հույսերը միանգամից փարատեմ. եթե 2009-ը, որ ծանրագույն տարի էր, կարողացանք բավական բարեհաջող հաղթահարել, ապա 2010-ը թե՛ բյուջեի առումով եւ թե՛ ընդհանրապես մեր տնտեսության համար կանխատեսելի ու հավասարակշռված տարի է լինելու: Մեծ վստահություն կա, որ հաջորդ տարի թե՛ բյուջեն եւ թե՛ մակրոտնտեսական ցուցանիշները կկատարվեն ամենաբարձր մակարդակով: 2010թ. բյուջեն ամբողջությամբ բալանսավորված է: Ու թեեւ

առկա է դեֆիցիտի բարձր մակարդակ (2009թ. մեր դեֆիցիտը կլինի 7.5%-ի կարգի, հաջորդ տարի լինելու է 6%), մենք հստակ գիտենք դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները: Դրանց կեսը ներքին աղբյուրներ են, կեսը՝ արտաքին: Հաջորդ տարվա բյուջեում այդ առումով որեւէ խնդիր չկա, առավել եւս, որ Եվրամիության վարկը դեռեւս դրանում չենք էլ ներառել: Ծախսերի մասով ունենք 935 մլրդ-ի բյուջե, ինչն ավելի մեծ է, քան այս տարվա կատարողականը: Այսինքն՝ հաջորդ տարվա բյուջեն ծախսային մասով այս տարվա սպասողականից ավելի շատ է պլանավորված: Եվ նույնիսկ գործնականում գրեթե նույն է, ինչ այս տարվա՝ մինչև ճգնաժամը ծրագրավորված 9.2% աճի դեպքում: 2010-ի բյուջեի ծախսային մասը կազմում է 935 մլրդ, ու եթե ԵՄ ռեսուրսներն էլ ներգրավվեն՝ ընդհուպ մոտենում է 1 տրիլիոնի: Այսինքն՝ հաջորդ տարի մենք բյուջեի՝ այս տարվանից բարձր մակարդակ ենք ունենալու: Դա տրամաբանական է, եւ այդ բյուջեն ապահովված է անհրաժեշտ ռեսուրսներով: Առկա է 100%-ոց ապահովվածություն:

- Բյուջեի նախնական ու վերջնական տարբերակներն ուսումնասիրելիս հասկացանք, որ այն զգալի փոխվել է: Այդքանով հանդերձ՝ բյուջեի աճին վերաբերող տոկոսային նիշը (1.2%) չփոխվեց: Տպավորություն է, թե անկախ ամեն ինչից՝ աճը լինելու է ճիշտ այդքան:

- Դա մենք անում ենք՝ ի հաշիվ ոչ թե մակրոտնտեսական թվերի վերանայման, այլ վարչարարության բարելավման: Իսկ 1.2%-ի դեպքում, չեմ թաքցնում, ռիսկի չգնացինք: Մենք զգալի ավելացնում ենք հարկային եկամուտները: Նախնական տարբերակի 533 մլրդ թիվը դառնում է 570: Այդ աճից 19 մլրդ-ը մաքուր եկամուտներն են՝ միայն վարչարարության բարելավմամբ պայմանավորված: Մենք ուսումնասիրել ու գնահատել ենք, որ դա հնարավոր է անել, այդ

թվում՝ այս տարի ընդունած օրենքները հնարավորություն են տալիս խստացնել վարչարարությունը նաեւ խոշոր բիզնեսում: Ինչպես նաեւ ավելացված արժեքի վերադարձի կոմպոնենտը. 18 մլրդ դրամ մենք այդ առումով նախատեսել ենք եւ՝ ծախսերի, եւ՝ եկամուտների մասով: Դա ինչ-որ առումով ֆորմալ գործողություն է, բայց ընդհանուր ծավալն ավելանում է: Մեր կատարած համալրումը հիմնականում վարչարարության հաշվին էր վերագնահատելու մեր հնարավորությունները, եւ այդ առումով հարկեր/ՅԱՀ հարաբերակցությունը դարձավ 17.7%, որը բավական բարձր ցուցանիշ է:

- Մեր գնահատականներով՝ բավական բարձր, մինչդեռ փորձագետների գնահատականներով՝ սա մեր տնտեսության ամենախոցելի տեղն է:

- Իհարկե: Մենք էլ ենք ասում: Բայց մենք հենանիշ ունենք ամեն տարի 0.3-0.4%-ով այդ ցուցանիշը բարելավելու: Այս տարի այն ավելացնում ենք կրկնակի՝ 0.7-0.8%-ով: Այսուհետ էլ դա արվելու է առաջընթաց տեմպերով, ինչը նշանակում է, որ վարչարարությունը բարելավվելու է: Դա արվում է միայն ու միայն ստվերը հարկային դաշտ բերելու հաշվին: Եթե ՅԱՀ-ի ցուցանիշը մնում է նույնը, իսկ հարկեր/ՅԱՀ հարաբերակցությունը կամ ծավալները մեծանում են, նշանակում է՝ այդքան ստվերային մաս բերվել է հարկային դաշտ:

- Որոշ տնտեսագետներ պնդում են, որ 2010թ. բյուջեն ակնհայտորեն չի ապահովում հիմնական թիրախ հայտարարված սպառման խթանումը: Նրանց կարծիքով՝ դրանում չկա եկամուտների բարձրացման քաղաքականություն, մասնավորապես՝ սոցիալական ոլորտում եւ աշխատավարձերի բարձրացման առումով, նաեւ այն առումով, որ տրանսֆերտների 30% կրճատման պայմաններում կառավարությունը որեւէ նոր նախաձեռնություն չի իրականացրել, որպեսզի այդ կրճատումը փոխհատուցվի Հայաս-



տանում ձեռնարկատիրական գործունեությամբ նոր եկամուտ ստեղծելու հնարավորության մեծացմամբ: Նույն տրամաբանությամբ նրանք համարում են, որ 2010թ. ՀՆԱ-ի աճն էլ խարսխված է ընդամենը տրանսֆերտների աճի եւ աշխարհում պահանջարկի սպասվող աճի վրա:

- Ցանկացած երկրում ՀՆԱ-ի աճի ձեւավորման մեջ ֆինանսական տարբեր հոսքեր են երեւում՝ թե՛ օտարերկրյա ներդրումներ, թե՛ մասնավոր տրանսֆերտներ, թե՛ տեղական ներդրումներ եւ այլն: Եթե (1-1.5 մլրդ) տրանսֆերտները համեմատում ենք ՀՆԱ-ի հետ, ապա ունենում է մոտ 10-12%-ի ազդեցություն, բայց ոչ 30%-ի: Հայաստանի նման երկրներում դա նորմալ երեւոյթ է: Բայց տնտեսության մեջ վճռորոշ դեր չի խաղում, եւ պետք չէ գերազնահատել դրանց դերը: Ինչ վերաբերում է սոցիալական ծախսերի եւ աշխատավարձերի մեծացմանը, որը կխթաներ պահանջարկը, դա իհարկե ցանկալի կլիներ, բայց եկող տարվա մեր հնարավորություններն այնքան մեծ չեն, որ կարողանանք ավելի լուրջ չափով ներարկումներ կատարել: Պետք է նաեւ հաշվի առնել, որ այս տարվա ծավալները, որոնք եկող տարի պահպանվելու են եւ չեն նվազեցվելու, նախատեսված էին մինչեւ ճգնաժամը: Եթե այդ մակարդակը մենք պահում ենք, նշանակում է՝ պահպանում ենք առաջարկը: Աշխատավարձերի մակարդակի պահպանումը մենք խթանում ենք նաեւ առաջարկը պահպանելով: Եթե հնարավորություն լինի, առաջիկա տարիներին նաեւ ավելացումներ կլինեն: Բայց պետք է արձանագրենք, որ մենք կարողացանք 2008 թվականի տնտեսական երկնիչ աճի պայմաններում ընդունած ծավալները պահպանել, ինչը հեշտ չէր եւ նպատակ ուներ խթանել պահանջարկն ու ստեղծել հազարավոր աշխատատեղեր:

- Նախատեսվում էր 9.2% աճ, ունենք 15-16%, իսկ որոշ գնահատականներով՝ ավելի մեծ անկում: Արդյունքում՝ ավելի քան 25%-ի շեղում ունենք: Որոշ տնտեսագետ-

ներ էլ հրապարակավ պնդում են, որ այդ շեղումը իրականում 40% է ավելի է: Մի՞թե ժամանակին հնարավոր չէր, ինչպես այս տարի արվեց, վերջին պահին սրբագրումներ մտցնել ու նման փաստի առջև չհայտնվել:

- Մենք այս նվազումն անվանում ենք տեխնիկական ռեցեսիա, որը վիճակագրորեն իրոք 18.5% եղավ հուլիսին, բայց բոլորս էլ գիտենք, որ դա պայմանավորված էր նախորդ տարիներին շինարարության ծավալների մեծ աճով, մեծ տեմպերով: Այսինքն՝ եթե շինարարությունը չհաշվենք, որը յուրաքանչյուր ուղորտ է, ստացվում է, որ տնտեսության միջին անկումը այդ 18%-ից շատ ավելի քիչ է: Այդ տուկոսն ընդամենը վիճակագրորեն է բնութագրում անկումը:

- Կարող ենք ասել, որ մեր տնտեսության մեջ ճգնաժամային տարրեր կային համաշխարհային ճգնաժամը սկսվելուց շատ առաջ:

- Կային դիսբալանսներ, կար դիվերսիֆիկացիայի ցածր մակարդակ: Բայց դա ճգնաժամ չէր եւ միայն Հայաստանին բնորոշ չէ: Պետք է նկատի ունենալ, որ այդ խնդիրներն ընդհանրապես բնորոշ են փոքր երկրներին: Մեր տարածաշրջանի շատ երկրներում դիվերսիֆիկացիայի մակարդակը շատ ավելի ցածր է, որովհետեւ մեկ-երկու ոլորտ ունեն, նավթ, գազ եւ այլն: Իսկ շինարարությունը շատ ավելի տիպիկ է մեզ նման սակավ ռեսուրսներ ունեցող երկրների համար, որովհետեւ այդ հատվածը բավական դատարկ է, եւ այդտեղ մեծ պահանջարկ կար, բնականաբար՝ կապիտալը հոսելու էր դեպի այդ ոլորտը: Եթե պահանջարկն այլ ոլորտում լինի, կապիտալը կհոսի այդ ուղղությամբ: Այս առումով ես որեւէ մտավախություն չունեմ: Շուկան մեզանից շատ ավելի լավ կկարգավորի ամեն ինչ: Այնպես որ՝ պետության միջամտության գործիքները սահմանափակ են, եւ դա վատ չէ: Մենք աստիճանաբար պետք է վերադառնանք նորմալ իրավիճակին, երբ տնտեսությունն ինքնակարգավորվում է:

- Թե՛ դրսի եւ թե՛ տեղի փորձագետները պնդում են, որ ճգնաժամը հաղթահարելու եւ ընդհանրապես Հայաստանի տնտեսությունը զարգացնելու իրական թերեւս միակ ճանապարհը օլիգոպոլիաների վերացումն է, ներդրումային միջավայրի եական բարելավումը, հետեւաբար եւ հավասար մրցակցային դաշտի ստեղծումը՝ սրանց տրամաբանական ածանցյալներով: Ծգնաժամային այս ավելի քան մեկ տարին ի՞նչ «դասեր» տվեց՝ վերոնշյալ ուղղություններով լուրջ, որոշակի ու հստակ քայլեր անելու առումով: Մեր կառավարությունն այսօր պատրաստ է այդ քայլերն անելով՝ իրավիճակը շտկել:

- Այդ ամենը, ինչպես արդեն նշեցի, փոքր քայլերով արվում է: Կարելի էր պետք է հետեւենք, որ այդ քայլերը չդադարեն. անընդհատ լինեն: Թարմացվում եւ ուժեղացվում է հավանաբար կցային օրենսդրությունը, փորձում ենք բիզնես միջավայրում խոչընդոտները վերացնել: Այդ ուղղությամբ պրակտիկ գործողություններ էլ են արվում: Մեր բոլորի խնդիրն է հետեւել, որ ապահովվի իրականացվող քայլերի անընդհատությունը: Ինչ վերաբերում է օլիգոպոլիաներին, դա պայմանավորված է նաեւ փոքր շուկայով, որտեղ ռիսկերն ավելի մեծ են: Փոքր շուկայում հեշտ է գերիշխող դիրք գրավել: Ուստի՝ Հայաստանի նման պետություններում դրա դեմ անհրաժեշտ է շատ ավելի ուժեղ պայքարել: Հավատացնում եմ՝ դրա համար անհրաժեշտ քաղաքական կամքը կա, բայց դրա իրականացումը միանգամից լուծվող խնդիրներից չէ: Բայց հավատացնում եմ, որ այդ ուղղությամբ լուրջ կամք ու ձգտումներ կան: Եվ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության այս տարվա փոփոխությունը նշանակում է, որ հաջորդ տարի ստվերից կամ մենաշնորհներից 25-30 մլրդ դրամ ավելի հարկեր են հավաքվելու: Դա հաստատ փոքր ու միջին բիզնեսից չի հավաքվելու: ՓՄՁ-ից այդքան չես հավաքի: Եթե ամեն տարի այսքան միայն այդ դաշտից բերվի, արդեն բավական լուրջ քայլ կարող ենք արձանագրել: ■